




Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց,
Եւ յարութեամբ իւրով մեզ զկեանս պարզեաց.
Նմա փառք յաւիտեանս.
Ամէն.

Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ,
Մահով յաղթեց մահին
Եւ իւր յարութիւնով մեզ կեանք պարգևեց.
Նրան փառք յաւիտեանս.
Ամէն.

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Կ Ո Ն Դ Ա Կ Ն Ե Ր

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ԵԻՍՈՒՍԻ ԴԵՐԻՍՏՈՍԻ . . .

Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի Դուռեան, հարազատի Մայր Աթոռոյս, նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Իրազեկ եղաք ի լրագրաց, եթէ արծարծի խնդիր և եղեալ է ի հասարակաց դատաստանի վասն թոյլ տալոյ զժողովս քաղաքականս (միթինկս) ի մէջ եկեղեցեաց մերոց, ընդ որ՝ իբրև թէ, հաւանութիւն տուեալ է Ամենապատուութիւն Ձեր և Ազգային Խառն Ժողովն:

Ընթերցաք նաև ի լրագիրս, զի մի ոմն ի պատուարժան երեսփոխանաց ի գումարման անդ Ազգային Ժողովոյ Հայոց Թիւրքիոյ յայտարարեալ է, եթէ և Մեր հաւան գտեալ է ընդ գումարումն ժողովոց (միթինկաց) յեկեղեցիս մեր, որ ի Կ. Պօլիս: Սակայն յայտ իսկ է լրութեան Ազգիս և որոց յիշեն զիրացն զհանգամանս, զի յառաջ քան զժամանեկն Մեր ի մայրաքաղաքդ, որ յերեքտասաներորդի օգոստոս ամսոյ 1908 ամի, յօրէ անտի հռչակելոյ սահմանադրութեան Օսմանեան պետութեան՝ ի 10-էն ամսեան, ասեմք, յուլիսի այնր ամի, յերեսաց երեսնամեայ բռնակալութեան՝ ի սոսկալի չարչարանս և ի տուայտանս մատնեալ հայ, թուրք և այլ ժողովուրդ երկրիդ, մանաւանդ մայրաքաղաքիդ, յանկարծուստ ազատեալ ի վիճակէ անտի մահափիւռ հաւածանաց, գողցես փոխեալ յայլ այր և մօլեալ ուրախութեամբ՝ ոչ գիտէր, եթէ զինչ գործէր և զինչ խօսէր. և ահա ի պարագայս և ի հանգամանս յայսօսիկ սկիզբն առեալ էր գումարման միթինկաց յեկեղեցիս Հայոց, Պարտ է ամել ի միտ, զի ոմանք գործեցին զգործս գլխովին անպատշաճ և անպատուաբերս ազգի մերոյ և եկեղեցւոյ:

Այս էր իսկական վիճակ ժողովրդեան մայրաքաղաքիդ՝ յորժամ հասաք Մեր ի Կ. Պօլիս։ Որք կամիցին հասու լինել ճշմարտութեանս այսմիկ, ընթեռնուցուն զլրագիրս զհրատարակեալս յայնմ ժամանակիւ Զխարդ ուրեմն, որ գիտէ զայս ամենայն, բանս ի մէջ առնու յերեսփոխանական ժողովի անդ և յայտնէ, եթէ հրամանաւ կամ հաւանութեամբ մերով բացեալ են դրունք եկեղեցեաց մերոց՝ այդր եղելոց, վասն ժողովոցն այնոցիկ։ Քայտ առնեմք և զայս, եթէ չիք տուեալ Մեր ի պատրիարքական պաշտօնավարութեան մերում զնոյնօրինակ հրաման, իսկ յառաջ քան զպաշտօնավարութիւն պատրիարքութեան չէր ինչ իշխանութիւն Մեր տալ հրաման վասն այսր կամ այնր գործոյ։

Թէպէտ և Մեր ցարդ չունիմք պաշտօնական տեղեկութիւն ինչ զյարուցեալ խնդրոյդ, այլ քանզի զարդիս խնդիրս եղեալ է ի հրապարակի և թերեւ կանխեսցի լուծումն կամ տնօրէնութիւն անբաւարար յազագոս. եկեղեցւոյս Հայաստանեայց, ընդ հովանեաւ որոյ կայ մնայ իսկզբանէ անտի քրիստոնէութեան այսր ամբողջութիւն Ազգիս, հարկ անհրաժեշտ վարկանիմք՝ իբրև Հայրապետ լրութեան ազգիս, այսու Կոնդակաւ մերով յանձն առնել Ամենապատուութեան Զերում տնօրինել արգելուլ յեկեղեցիս մեր զգումարումն ժողովոց (միթինկաց), որք ունին զքաղաքական բնոյթ և հային ի խնդիր ազգի ազգի քաղաքական հոսանաց և կուսակցական տեսութեանց կամ ուղղութեանց, որք ի բացառիկ հանգամանս, որպէս ի վերանդ յիշեցաք, նախ քան զմուտն Մեր ի մայրաքաղաքդ՝ ի նախօրեկի հրատարակման սահմանադրութեան տառապեալ երկրիդ, ընդ ազդեցութեամբ բուն զգացմանց և անսահման ոգևորութեան ժողովրդոց գումարեցան յեկեղեցիս։ Գիտեն Ամենապատուութիւն Զեր և պատուարժան անդամք Կրօնական և Քաղաքական ժողովոց, եթէ ս. եկեղեցին Հայոց չէ ասպարէզ և բեմ քաղաքական և կուսակցական բանախօսութեանց և պայքարի, յորոց ծագին դժգոհութիւնք, տարաձայնութիւնք, ծայրայեղ արտայայ-

տութիւնք յեկեղեցւոյ, որով և նսեմանայ կրօնական վսեմ նշանակութիւն նորա յաչս հաւատացեալ ժողովրդեան մերոյ և նոյն իսկ օտարաց։ Սրբազան պարտիք են ամենեցուն՝ յարգել զնուիրական զգացմունս հաւատացելոց. ահա այս է առողջ և ուղիղ սկզբունք ազատութեան խղճի։

Լիայոյս եմք, եթէ Ամենապատուութիւն Ձեր և Ազգային Խառն ժողով, որպէս և մէն մի գիտակից, խոհուն և հեռատես անդամ ի մերազնէից տեղւոյդ, ունին յուշ առնուլ զայս կարեւոր և զծանր խնդիր և խոհական իմաստութեամբ ամենեցունցդ և ըստ հրահանգացս այսոցիկ տալ աւարտ յարուցեալ խնդրոյդ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի մէնջ։ Ամէն։

ՄԱՏԹԻՆՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7 ապրիլի 1910 թ.

Թ. 886.

ՄԱՏԹԻՆՍ ԵԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ...

Սինոդի սրբոյ էջմիածնի.

Յօրէ անտի ամբառնալոյ Մեր ի Գահ Հայրապետական ուշի ուշով դիտեմք զամենայն գործառնութիւնս հոգևոր հաստատութեանց և պաշտօնէից մերոց և նկատեմք զանհրաժեշտութիւն անմիջական վերստուգութեան և քննութեան այնոցունց։ Յայտ է, զի ամենայն հաստատութիւն պարտի զգործունէութենէ իւրմէ յաւարտ տարւոյն տալ զստոյգ և զմանրամասն տեղեկագիր այնմ իշխանութեան, որում ստորագրեալ լինի, ևս առաւել զգրամական հաշուոցն, զի նկարագիր գործառնութեան և պատկեր արդեանց և ծախուցն լիցի ի վերայ հրապարակի՝ ի խոյս կասկածանաց, թիւրիմացութեանց, երբեմն և զեղծմանց։ Վասն կանոնաւորելոյ զայս ամենայն հոգևոր բարձրագոյն իշխանութիւնն պարտի վերստուգել պարբերաբար և ի քնն առնուլ զընդհանուր գործառնութիւնս և զհաշիւս հաստատութեանց և պաշտօնէից իւրոց, տալ նոցա զնորանոր և զկարեւոր հրահանգս, ցուցանել զկանոնաւոր եղանակ գանձման արդեանց.

և կառավարելոյ ղկալուածս, ի կարգ և յուղղութիւն հրաւիրել ղթերացոյս ի պաշտաման և խրախուսել ղկարգապահ և զարդիւնաւէտ պաշտօնեայս:

Տեղեկացաք ի գործոց Սինօդիդ, եթէ ընդ նախագահութեամբ Գերապատիւ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի, Տեղակալի Հայրապետութեան, կարգեալ էր ի 27 օգոստոսի 1908 ամի ղվերաքննիչ տօմարաց և դրամական հաշուոց թեմորէից մերոց և միանգամայն ժողովող ազգի ազգի ապառկաց: Սակայն ինչ ինչ հանգամանք խոչընդոտ հանդիսացեալ իրագործման և յարատեւութեան ցանկալի տնօրէնութեանդ, խնդիր հաշուետեւութեան և վերստուգութեան յետաձգեալ լինի ժամանակաւորապէս:

Զարդիս Սինօդդ յայտարարութեամբ ի 5-ամեանս ապրիլի, թ. 948, խնդրէ ղտնօրէնութիւն Մեր յաղագս կարգելոյ քննիչ մի առ ի վերստուգել և ի քննել զամենայն դրամական գործս և ղհաշիւս հոգեւոր հաստատութեանց և պաշտօնէից մերոց: Արդ՝ որպէս ի վեր անդ յիշեցաք, ի նկատ առեալ Մեր զանհրաժեշտութիւն յարուցեալ խնդրոցդ և միանգամայն հաճ և հաւան գտեալ ընդ կարծիս Սինօդիդ, այսու կոնդակաւ մերով կարգեմք զանգամ Ատենիդ զբարձրապատիւ տ. Մատթէոս վարդապետն վերաքննիչ դրամական գործոց, հաշուոց և ամենայն գործառնութեանց վիճակային կոնսիստորիայից, հոգեւոր կառավարութեանց, գործակալաց, կառավարչաց կալուածոց և առհասարակ այլ պաշտօնատար անձանց: Վասն որոյ առաջադրեմք Սինօդիդ տնօրինել սահմանել ղխնդիր ուճկի և ծախուց սննդեան և ճանապարհի կարգեալ վերաքննչի, նոյնպէս և մշակել ղկարեւոր հրահանգս վասն կատարման պարտուց պաշտաման քննչի և զայդ ամենայն առաջի առնել Մեզ ի տես և ի վախճանական տնօրէնութիւն:

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12 ապրիլ 1910 ամի. Թ. 930

ի Վաղարշապատ

Շրջաբերական

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . .

Գերաշնորհ Առաջնորդի թեմին Հայոց . . . հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Հասանեն յունկն Մեր, եթէ ոմանք ի քահանայից ի Տաճարի Տեառն առանց պատկառելոյ թոյլ տան ինքեանց կրել զկամեւաւկա անուանեալ գլխարկն, որ շնորհեալ է առ ի կրել արտաքոյ եկեղեցւոյ: Այլ և փոխանակ բարի օրինակ հանդիսանալոյ ժողովրդեան առաքինի գնացիւք իւրեանց, սերմանելոյ և ներշնչելոյ ի սիրտս նորա զխաղաղութիւն աւետարանական բանիւք և ջերմեռանդութիւն, փոխանակ գուն գործելոյ յաղագս բարեգարդութեան եկեղեցւոյ և յառաջադիմութեան ազգային կրթական և այլ բարեգործական հաստատութեանց, ընդհակառակն՝ զուրկ ի քրիստոնէական քաղաքավարութենէ, վարուք և բարուք իւրեանց և միանգամայն եպերելի բնաւորութեամբ և ոչ քրիստոնէավայել գործովք պատճառ լինին բազմաց գայթակղութեան, սերմանեն ի մէջ բարեպաշտօն ժողովրդեան զերկպառակութիւն, որով և պատճառեն զզուանս և ածեն ի մոլորութիւն զբազումս ի ժողովրդականաց մերոց:

Զայս ամենայն յուշ առեալ Մեր, պատուէր հրամանի տամք Գերաշնորհութեան Ձերում ունել զխիստ հսկողութիւն ի վերայ սպասաւորաց Տանն Աստուծոյ, արգելուլ իսպառ կրել զկամեւաւկայս յեկեղեցիս, յորդորել և սաստել ի սահմանս իրաւանց և պարտուց Ձերոց զանուղղայ եկեղեցականս և ի դէպս հարկի անհրաժեշտութեան առանց դանդաղելոյ արկանել զնոսա ընդ պատուհասիւք և պատժովք առ ի ընդ միշտ արմատախիլ առնելոյ զանկարգութիւնս հոգևոր պաշտօնէից, որք կոչեալ են լինել առաջնորդ և ղեկավար յանձն եղեալ ի խնամս իւրեանց բանաւոր հօտին Քրիստոսի:

Յուսամք և միանգամայն աներկբայ եմք, եթէ եռան-

դագին ջանիւք և աշալուրջ հսկողութեամբ Գերաշնորհութեան Ձերոյ իշխեցեն յամենայն կրթական և յայլ հաստատութիւնս և յատկապէս եկեղեցիս Մեր օրինակելի և նախանձելի կարգապահութիւն և ճիշտ և կանոնաւոր կատարումն պարտուց հոգեւոր պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ մերոյ:

Ողջ լեւուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ, Ամէն:

Ի 24-ն Ապրիլի 1910 ամի.

թ. 1137.



Հայրապետական սնօրէնութիւններ

Կոնգակ Ղարաբաղի թեմի բոլոր 74 եկեղեցական—ծխական դպրոցների հոգաբարձութիւնների անունով թեմում եղած դպրոցների հաստատման առթիւ: 1 ապրիլի. թ. 644—717:

— Աստրախանի թեմի եկեղեցական—ծխական հոգաբարձութիւնների անունով թեմի 24 ծխական դպրոցների հաստատման առթիւ: 1 ապրիլի. թ. 718—741:

— Տարօնի Առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկոպոս Խարախանեանի անունով, որով յանձնարարուեց հանգուցեալ Մարգար Բ. Պոպովեանի կտակով Մշու Ս. Կարապետի վանքում բացուելիք վարժարանի շինութեան յատակադիր և ծախքի նախահաշիւը ուղարկել: 3 ապրիլի. թ. 759:

— Շամախու թեմի եկեղեցական—ծխական հոգաբարձութիւնների անունով թեմում եղած 13 ծխական դպրոցների հաստատման մասին: 3 ապրիլի. թ. 763—775:

— Ս. Էջմիածնի ս. Սինօդի անունով, որով պատուիրուեց տնօրինել արձակել Տ. Խոսրով վարդապետ Փիլթականին Մոզնու վանքի վանահօր և Ապարանի գործակալութեան պաշտօններէն՝ յանձնելով այդ պաշտօնները Յովէլ վարդապետ Խարազեանին: 3 ապրիլի. թ. 784:

— Երևանի Հայոց Կոնսիստորիայի անունով, որով կարգաւոյժ եղան Ղարսի վիճակի Բուրկ գիւղի Պետրոս քահ. Յովհաննիսեան և Քերս գիւղի Սարգիս քահ. Տէր Սարգսեանը, որպէս ապօրինի ճանապարհով ձեռնադրուածներ, 3 ապրիլի. թ. 785:

— Վրաստանի Հայոց ամբողջ թեմի եկեղեցական— ծխական հոգաբարձութիւնների անունով՝ թեմում եղած 88 ծխական դպրոցների հաստատման առթիւ, 5 ապրիլի. թ. 792—878:


— Ս. Էջմիածնի Սինօգի անունով, որի հետ ուղարկուեց Կոմսուհի Ելիսավետա Վորոնցովա—Գաշկովայի, որ նախագահուհի է Աբասթումանում կառուցանելի բուժարանի նուիրաբերութեան ժողովման վարչութեան՝ գրութեան պատճէնը, և առաջադրուեց Մայր Աթոռի գանձարանից 300 ռ. նպաստ տալ յիշեալ բուժարանի օգտին, 7 ապրիլի. թ. 891:

— Կ. Պօլսի Ամենապատիւ Պատրիարքի անունով, որով յանձնարարուեց յայտնել Ամերիկայի առաջնորդութեան համար ևս երկու թեկնածուի ցանկ, բացատրելով, որ թեկնածու կարող են լինել և վարդապետներ: 7 ապրիլի. թ. 892:

— Ռուսաստանի բոլոր թեմական առաջնորդների անունով, որով պատուիրուեց թեմերի Հայոց եկեղեցիներում միանգամ գանձանակ շրջեցնել Աբասթումանում հիմնուելիք բուժարանի օգտին և գոյացած դրամն ուղարկել Ս. Էջմիածնի Սինօգ. հասցնելու ըստ պատկանելոյն. 7 ապրիլի. թ. 906—912:

— Կոնդակ Ս. Էջմիածնի Սինօգի անունով, որով ծանուցուեց Գեր. Տ. Մխիթար Եպիսկոպոսի Աստրախանի թեմի առաջնորդական պաշտօնում հաստատուելը Բարձրագոյն հրամանով և պատուիրուեց տեղեկութիւն տալ այդ մասին Աստրախանի Հայոց Կոնսիստորիային: 29 Մարտի, թ. 632

— Կոնդակ Գեր. Տ. Մխիթար Եպիսկոպոսի անունով՝ Աստրախանի թեմի առաջնորդ Հաստատուելու առթիւ, 29 Մարտի, թ. 633.



ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

Մարտի 14-ին Սինոդը թոյլ տուեց Երևանի Կոնսիստորիային ընդունել Աղէքսանդրապոլի դաւառի Սոնգիւրլի գիւղի բնակիչ Արշակ Տէր-Մէլիքսեդեկեանին և Կապս գիւղի բնակիչ Արշակ Ծառուկեանին հոգևոր կոչման մէջ՝ իւրաքանչիւրին իւր գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, իսկ ձեռնադրութեան համար հրաման տուից Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Տէր-Մովսէսեանին. թ. թ. 197—198:

— Մարտի 29-ին Սինոդը լսելով զեկեղեցումն, որոշեց յայտարարութեամբ ամենախոնարհաբար խնդրել Վեհափառ Հայրապետից հոգևոր հաստատութիւնների և պաշտօնեաների գործերն ու հաշիւները քննելու համար կարգել յատուկ քննիչ. թ. 213.

— Մարտի 31-ին Սինոդը քննելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի առաջնորդի մատուցած՝ Բելցում պ. Մկրտիչ Լուսեղէնեանցի նուիրաբերութեամբ կառուցանելիք եկեղեցու յատակագիծ ուրուանկարը, թոյլ տուեց Քիչնե քաղաքի վերաբնակիչ Մկրտիչ Լուսեղէնեանի հաշուով կառուցանելի եկեղեցու շինութիւնը այն պայմանով, որ նախ տաճարի մակարդակը փոխուի համեմատ այն նոր գծագրին, որ ուղարկուելու է այս հրամանի հետ, և երկրորդ՝ որ օրէնքի պահանջի համեմատ տաճարի յատակագիծը հաստատուած լինի նահանգական վարչութեան շինարարական մասից:

Ներկայացրած յատակագծի մէջ դամբարանի վերաբերեալ և այլ մասերը մնում են անփոփոխ: Այս վճռի ճիշտ կատարման համար հանել հրաման Նոր-Նախիջևանի: